Դեսպան ԱՈԿԻԻ հրաժեշտի այցը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին

Նոյեմբերի 18-ին դեսպան ԱՈԿԻՆ դիվանագիտական առաքելության ավարտի կապակցությամբ քաղաքավարության այց է կատարել ՀՀ վարչապետ Ն.Գ. Նիկոլ Փաշինյանին:

Վարչապետ Փաշինյանը շնորհակալություն է հայտնել դեսպան Առկիին պաշտոնավարման ընթացքում Ճապոնիա-Հայաստան հարաբերությունների զարգացման գործում ունեցած ներդրման համար: Նա ընդգծել է վերջին տարիներին երկկողմ համագործակցության ոլորտում արձանագրված նշանակալի առաջընթացը և հաստատել Հայաստանի պատրաստակամությունը՝ առավել ամրապնդելու և ընդլայնելու երկու երկրների միջև հարաբերությունները:

Դեսպան Առկին իր հերթին շնորհակալություն է հայտնել պաշտոնավարման ընթացքում ցուցաբերված աջակցության և համագործակցության համար՝ վերահաստատելով Ճապոնիայի հանձնառությունը՝ շարունակելու ամրապնդել Ճապոնիայի և Հայաստանի միջև բարեկամական հարաբերություններն ու համագործակցությունը:







